ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 09 >> սեպտեմբերի 2014 թվականի N: 219-Ա **ք.Գյումրի**

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՄՐԱՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 35 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 5/2 (նախկին 5գ) շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1966377 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 3-ի թիվ 73 որոշումը, ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի <<Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի <<Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին>> թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով.

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի կողմից հատկացված Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 5/2 շենքի թիվ 35 երկու սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝

Մանուկյան Սուսաննա Լևոնի,
Մանուկյան Լևոն Արամի,
Մանուկյան Արմեն Արամի,
Ղարսյան Սեդա Արամի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է